ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի կարիքների համար «հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների» ձեռքբերման «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2024/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» հունվարի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Խաչատրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող

Տիգրան Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակա՝ Նվարդ Հովհաննիսյան ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետի տեղակալ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2024/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 09.01.2024թ. ժամը 11:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.01.2024թ., ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Չափաբաժնի համարը	Գնման գինը	Չափաբաժնի անվանումը
1	3300000	հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Էլ. հասցեն
1	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	info@compgarant.am

2	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	HaykLV@yandex.ru

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2024/04» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

ՀԲԱՂԵՑՐԱԾ ՏԵՂ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	3399000	20 %	4078800	3296000	20 %	3955200.00	Մերժված
2	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	99000000	20 %	118800000	99000000	20 %	118800000.00	Մերժված

Մասնակիցների առաջակված գները գերազանցել են գնման գինը և մերժվել համակարգի կողմից:

Հիմք ընդունելով Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց՝

Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հանձնաժողովի՝

Անդամներ՝

Տիգրան Խաչատրյան

Տիգրան Հակոբյան

Քարտուղար՝

Դիանա Գրիգորյան